«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆ

ԹԵՄԱ Շարադրություն գրելու գործընթացում աշակերտների խոսքի զարգացման մակարդակի որոշում

ԱՌԱՐԿԱՆ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Մերրի Սաղաթելյան

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Երասխահունի Մ.Գևորգյանի անվան միջն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՐՈՇՈՒՄ 3

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկը աշակերտների բանավոր ու գրավոր խոսքի զարգացումն է, որի հիմքերը դրվում են տարրական դասա րաններում:

Թեմայի արդիականությունը: Կապակցված խոսքը հաղորդակցման և փոխըմբռնման կարևորագույն միջոց է: «Խոսքի զարգացումը, նրա մշակումը, խոսքի կատարելագործումն ու հարստացումն է այն հաշվով, որ ապահովվի խոսքի ճիշտ, նպատակային կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի, թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների, օրինաչափությունների տեսակետից»:

Խոսքային հաղորդակցական կարողությունները ձևավորվում են տարրական դպրոցում, այդ հարցում կարևորվում է մայրենի լեզվի դերը: Տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսումնասիրման հիմնական նպատակներից են կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացումը, խոսքի ձևավորումը, հաղորդվելիք մտքին համարժեք բառեր ընտրելու, բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու կարողության մշակումը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման հնարավորությունները շարադրության միջոցով և ներկայացնել այդ ուղղությամբ մեթոդական քայլաշարեր:

Հետազոտության խնդիրներն են.

- հիմնավորել շարադրության կարևորությունը կրտսեր դպրոցականների կապակցված խոսք կառուցելու գործում,
- դիտարկել շարադրության համար նախատեսված ստեղծագործությունների առանձնահատկությունները,
- մշակել, փորձարկել և հիմնավորել կրտսեր դպրոցականների խոսքի զարգացմանը նպատող շարադրության տեսակների կիրառման ձևերի մեթոդական համակարգը:

ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՐՈՇՈՒՄ

Կարդալն ու գրելը մարդու կրթության և ընդհանուր զարգացման համար հենքային ունակություններ են: Դրանց վրա գործնականորեն կառուցվում է նրա հետագա ողջ ուսումնական գործունեությունը . ժամանակին և բավարար մակարդակով այս ունակություններին չտիրապետող երեխան անպայման կդժվարանա ուսումնական գործունեության մեջ :

Գրավոր խոսքի գործընթացը հոգեբանական և ֆիզիոլոգիական տեսակետից բավականին բարդ է: Այն ընդգրկում է երեխայի մտավոր գործունեության բազմաթիվ ոլորտներ և պայմանավորված է գլխուղեղի կեղևի տարբեր հատվածների , տեսողության, լսողության օրգանների, խոսքի կառույցի , մարմնի մկանների գործունեությամբ: Դպրոցական ուսուցումը նոր սկսած երեխաների համար այդ գոծընթացն առավել դժվար է, այն պատճառով, որ միաժամանակ ձևավորում են ինչպես մատների նուրբ շարժումները կոորդինացնելու, ղեկավարելու կարողությունները, այնպես էլ ուղղագրական կանոններին գրելու ունակությունը:

Ուսումնասիրելով գրավոր խոսքի բնույթը՝ Լ. Ս. Վիգոտսկին եկել է այն եզրակացության, որ հոգեբանության տեսանկյունից այն էականորեն տարբերվում է բանավոր խոսքից ինչպես գործառույթային, այնպես էլ ներքին կառուցվածքային իմաստներով: Գրավոր խոսքի կարևոր առանձնահատկությունն այն է , որ նա <<ծնվում է >> տարաբնույթ դրդապատճառներով՝ հաճախ իրադրությունից անկախ՝ ունի առավել անկախություն և ամենակարևորը՝ այն իրականանում է առանց զրուցակցի :

Ինչպես նշվում է, **բնագրին հարազատ կամ մանրամասն շարադրությունը** հանձնարարելի է բոլոր դասարաններում: Երկրորդ դասարանից սկսած՝ կարելի է աշակերտներին հանձնարարել գրել մի քանի նախադասությունից կազմված փոքրիկ բնագրեր՝ դրանց ծավալն ու բովանդակությունը աստիճանաբար բարդացնելով [Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 295]:

Ուսումնասիրած մեթոդական գրականության և մեր լսած ու վարած դասերի արդյունքում եկել ենք այն համոզման, որ բնագրին հարազատ կամ մանրամասն շարադրությունը՝ որպես գրավոր աշխատանքի տեսակ, ներառում է մի շարք փուլեր՝ պայմանավորված անցկացման մեթոդական շղթայով.

ա. սկզբում աշակերտների կամ ուսուցչի կողմից կատարվում է բնագրի ամբողջական ընթերցում,

բ. ուսուցչի կողմից անցկացվում է հարցազրույց ընթերցած բնագրի շուրջ:

Հարցազրույցի նպատակն է պարզել՝ արդյոք աշակերտները լիովին ըմբռնել են բնագիրն ու դրա հիմնական գաղափարը, թե նորից պետք է անդրադառնալ բնագրին,

գ. հաջորդ քայլը վերաբերում է բնագրի կառուցվածքային առանձնահատկություններին. առանձնացնում են անհասկանալի, ուղղագրական արժեք ունեցող և հենակետային բառերը, ապա աշակերտները յուրաքանչյուր հատվածի համար ընտրում են վերնագրեր, որոնք էլ դառնում են պլան՝ շարադրություն գրելու համար:

դ. գրատախտակին գրված բառերն օգտագործելով՝ աշակերտները պատասխանում են պլանի կետերին, ապա մեկ-երկու աշակերտ պատմում է ամբողջական նյութը,

ե. նշված քայլերին հաջորդում են բնագրի գրառումն ու ինքնաստուգման աշխատանքը:

Հարկ է նշել, որ տարրական դասարաններում տարբերվում են շարադրության նյութերը՝ թե՛ թեմատիկայով, թե՛ ծավալով: Երրորդ դասարանում շարադրության բնագրերն ավելի սեղմ են, մինչդեռ չորրորդ դասարանում շարադրության շուրջ տարվող աշխատանքն աստիճանաբար բարդանում է, բնագրերն առավել ընդարձակ են դառնում, և կիրառվում են շարադրության այլ տեսակներ:

Համառոտ շարադրությունը համեմատաբար բարդ է՝ ի տարբերություն շարադրության մյուս տեսակների, դրա համար էլ կիրառվում է միայն չորրորդ դասարանում: Բնագրի ընթերցումից հետո խմբային հարցազրույցի միջոցով աշակերտների ուշադրությունը բևեռվում է ընթերցվող բնագրի կարևոր հատվածների վրա: Այնուհետև, ինչպես ընդարձակ շարադրության ժամանակ, այնպես էլ համառոտ շարադրության դեպքում, գրատախտակին գրում են տեքստում հանդիպող անծանոթ բառերն ու բառակապակցությունները, հենակետային բառերն ու բառակապակցությունները, ուղղագրական արժեք ունեցող բառերը և անհրաժեշտ պլանը: Աշակերտները հատվածաբար անդրադառնում են բնագրի բովանդակությանը՝ պատմելով այն համառոտ՝ բաց թողնելով մանրամասները և նկարագրությունները: Հետո սկսում են աշխատել: Ավարտելուց հետո ինքնաստուգում են կատարում և աշխատանքները հանձնում ուսուցչուհուն:

Համառոտ շարադրելիս գեղարվեստական բնագիրն աղքատանում է՝ վերածվելով պարզապես փաստերի թվարկության: Այդ երևույթը կանխելու համար աշակերտներին պետք է սովորեցնել ոչ թե բաց թողնել պատահական, իրենց կարծիքով ավելորդ հատվածները, այլ ընդարձակ արտահայտված հեղինակային միտքը հակիրճ ներկայացնել:

Ընտրովի շարադրության ուսուցման մեթոդիկան նման է ընդարձակ և համառոտ շարադրություններին, սակայն, ի տարբերություն շարադրության մյուս տեսակների, այս տեսակը գրելիս երեխաները վերարտադրում են ստեղծագործության միայն մեկ հատվածը, ընտրությունը կատարում է կա՛մ աշակերտը, կա՛մ ուսուցիչն է հանձնարարում ունկնդրել և վերարտադրել միայն իր հանձնարարած հատվածները (հատվածը)՝ ոչ միայն ընդարձակ, այլև ստեղծագործաբար, վերլուծելով, դատողություններ անելով:

Ընտրովի շարադրությունը նման է ընտրովի կարդալուն և պատմելուն: Եթե մայրենիի դասերին այս ուղղությամբ հաճախ է աշխատանք իրականացվում, ապա ընտրովի պատմելը բոլորովին դժվար չի լինում: Ընտրովի շարադրությունը կապող օղակ է շարադրության և շարադրության միջև: Այն իրականացվում է միայն չորրորդ դասարանում, երբ աշակերտներն ունեն բնագրի շուրջ աշխատելու որոշակի կարողություններ, կարող են բացահայտել թեման, կռահել հիմնական միտքը, դատողություններ անել, հասկանալ ենթատեքստը և այլն:

Ընտրովի շարադրությունը ներառում է հետևյալ քայլերը.

ա. բնագրի ընթերցում ուսուցչի կողմից (կամ ընթերցում է որևէ աշակերտ),

բ. բովանդակության վերլուծություն, մտքերի փոխանակություն,

գ. շարադրության հատվածի ընտրություն,

դ. ընտրած հատվածի վերլուծություն (իմաստային լեզվառճական, ուղղագրական, հենակետային բառերի ընտրություն և այլն),

ե. նյութի բովանդակության վերարտադրում հենակետային բառերի օգնությամբ,

զ. ընտրված հատվածի վերնագրում,

է. բնագրի գրառում,

ը. ինքնաստուգում,

թ. գրավորների հանձնում: [Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Ե., 2015, էջ 2097-2098]:

Բանավոր շարադրության կազմակերպումն իրականացվում է դեռևս նախաայբբենական շրջանում, նպատակն է՝ աշակերտին վարժեցնել ուրիշի կարդացածը տրամաբանված և հետևողական բանավոր վերարտադրելուն, նկարի շուրջ պատմություն հյուսելուն: Շարադրության այս տեսակը մեծապես նպաստում է աշակերտի հիշողության, խոսելու, պատմելու կարողությունների զարգացմանը, հարստացնում նրա բառապաշարը, խոսքը դարձնում ավելի տպավորիչ ու հուզական: Պետք է լուրջ ուշադրություն դարձնել նկարի բովանդակությունը, պատկերները, գույները նկարագրող, կարդացած տեքստի գեղեցիկ և ճիշտ արտահայտություններն ու բառերը տեղին ու գիտակցված օգտագործելու կարողությունների մշակմանը:

Շարադրություններ գրելիս շատ կարևոր է, որ աշակերտները ծավալեն վերլուծական - ստեղծագործական մակարդակի գործունեություն:

Նկարի կամ բնագրի բովանդակության շուրջ հարցեր կազմելիս պետք է նկատի ունենալ հետևյալը. -

հարցի բառապաշարը պետք է աշակերտին ծանոթ լինի և չպարունակի անծա նոթ բառեր, -

հարցերը պետք է կազմվեն դիպուկ բառերով, հստակ արտահայտեն հարցնողի միտքը,

- հարցը պետք է լինի բազմապատասխան և աշակերտներին տա ընդարձակ խոսք կառուցելու հնարավորություն,

- եթե հարցերը գրվում են գրատախտակին, նպատակահարմար է դրանց կողքին գրել հենակետային՝ բանալի բառերը:

Շարադրություն գրելու կարողության ձևավորման մեթոդական քայլաշարը կարելի է իրականացնել երեք փուլով՝ ա. բանավոր՝ նկարի շուրջ պատմության հյուսում, բ. գրավոր՝ շարադրության տարրական կարողության զարգացում, գ. գրավոր շարադրություն գրելու կարողության ձևավորում:

Առաջին փուլն իրականացվում է բանավոր եղանակով՝ սկսած նախաայբբենական շրջանից: Նկարի շուրջ պատմություններ են հյուսվում, և վերարտադրվում է բնագրի բովանդակությունը:



CopyPaste

Նկար 1

Մյուս նկարի հեղինակը պատմեց իր նկարի բովանդակությունը: Նկարում պատկերել եմ ծառեր և ծաղիկներ: Երկնքում երևում են արևը և ամպերը: Արևային անձրև է գալիս: (Նկ.2):

Նկար 2

Հարկ է նկատել նաև, որ խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման և լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված [Ս. Խաչատրյան, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013, էջ 4-5]:

Շարադրություններ հյուսելիս նմանօրինակ աշխատանքների ներառումը նպաստում է երեխաներին հաղորդակցական-խոսակցական խնդիրների մակարդակից դեպի վերլուծական-ստեղծագործական-կառուցողական խոսք տանելը, ինչպես նաև մայրենի լեզվի ուսուցմանը: «Մայրենի լեզու սովորեցնելը երեք նպատակ է հետապնդում, առաջին՝ զարգացնել երեխաների այն բնածին, հոգեկան ունակությունը, որն անվանում ենք խոսելու ձիրք, երկրորդ՝ երեխաներին հասցնել մայրենի լեզվի գանձերի գիտակցական յուրացմանը և երրորդ՝ երեխաներին յուրացնել տալ այդ լեզվի

տրամաբանությունը» [Կ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950, էջ 742]:

Նկարի շուրջ շարադրություն հյուսելու գործընթացը սովորաբար ուղեկցվում է հետևյալ քայլերով.

1. զրույց թեմատիկ նկարի թեմայի և նրա մեջ ամփոփված գաղափարի շուրջ,
2. աշակերտների կողմից նկարի զննում,
3. ուսուցչի կողմից աշակերտներին հարցերով կողմնորոշում նկարի բոլոր մանրամասները նկատելու ուղղությամբ,
4. նկարի բարոյախրատական իմաստի վերհանում,
5. նկարում առկա անձանց, կենդանիներին անուններ վերագրում, նրանց գործողությունների հավանականության պատճառաբանում,
6. պատմելու ընթացքում կիրառելի բառերի վերլուծություն:

Նկարազարդումների, բնագրերի միջոցով իրագործվող պատմելու կարողության ձևավորման, ընթերցանության խնդիրներն ու նպատակները 2-րդ, 3-րդ և 4-րդ դասարաններում հետևյալներն են.

- հարստացնել աշակերտի բառապաշարը,
- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները,
- մաքրել, հղկել երեխաների՝ նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը,
- ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական գաղափարն ընկալելու, հերոսների գործողությունների տրամաբանականությունն ընկալելու, պարզ դատողություններ անելու կարողություններ,
- գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային հոգեկերտվածք, զարգացնել

լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը [Մեթոդական ուղեցույց 2-4-րդ դասարանների մայրենի լեզու դասավանդող ուսուցիչների համար, Երևան, 1995, էջ 12-13]:

Աշակերտը պետք է հանդես գա որպես ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, ինքնուրույն այդ ուղին անցնելու պատրաստ անձնավորություն:

Շարադրության միջոցով պատմելու կարողության ձևավորումն սկսվում է բնագրի ընթերցմամբ և նկարի բովանդակության վերարտադրմամբ: Դասագրքում բոլոր բնագրերն ուղեկցվում են նկարազարդ պատկերներով, ինչն ավելի է նպաստում տեքստի բովանդակության ընկալմանն ու կրտսեր դպրոցականի խոսքի զարգացմանը:

« Որպեսզի պատմելու կարողության ձևավորման գործընթացը նպաստի երեխայի խոսք կառուցելու և այն գրի առնելու կարողության զարգացմանը և ոչ թե դառնա ունկնդրածի մեխանիկական վերարտադրություն, շարադրության համար ընտրված նյութի գաղափարը՝ հիմնական միտքը, աշակերտը պետք է հասկանա, զգա դեպքերի տրամաբանական կապերը և «իր բառերով» վերարտադրի ընկալածը:

Ուսուցիչները պետք է հետևեն աշակերտի գործուն բառապաշարի հարստացմանը, քայլեր ձեռնարկեն, որպեսզի աշակերտներն իրենց սովորած բառերն ու բառակապակցությունները լայնորեն կիրառեն բանավոր և գրավոր խոսքում: Վերարտադրվող նկարը, ընթերցվող բնագիրը պետք է լինեն բովանդակալից, աշակերտի հոգու և մտքի վրա ազդող, դաստիարակեն նրան գաղափարապես, ճաշակ զարգացնեն գեղեցիկի նկատմամբ: Մինչ ընթերցելը՝ աշակերտները պետք է ծանոթանան տեքստի բառապաշարին: Երբ աշակերտները կարողանում են տիրապետել բառապաշարին՝ տեքստը բանավոր կամ գրավոր շարադրելու համար, կարելի է հաստատապես համոզված լինել, որ նրանք հեշտությամբ կարող են վերարտադրել տեքստը:

Բնագրին ուղեկցող նկարի պատմումը կարելի է իրականացնել մեթոդական հետևյալ շղթայով.

ա) աշակերտներին օգնել քննարկել նկարը,

բ) ընտրել հենակետային բառեր՝ բնագիրը վերարտադրելու համար,

գ) վերարտադրել բնագիրը (բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությամբ),

դ) կատարել բառային աշխատանք (ուղղագրական և իմաստային արժեքների դիտարկում):

Նկարը կամ դասագրքում առկա տեքստը վերարտադրելիս այն պետք է հատվածաբար աշակերտներին պատմել տալ, առավել ևս նրանց հարցեր տալ, ինչպես նաև օգնող բացատրություններ: Որքան էլ որ նկարը վերարտադրելիս տեղ տրվի երեխաների ստեղծագործական մտքին և վերլուծական մտածողությանը, այնուամենայնիվ, աշակերտները տեքստը պատմելիս պետք է տրված խոսքի նմուշից կիրառեն այն բառերը, արտահայտությունները, որոնք աշակերտներին հանդիպում են առաջին անգամ, որպեսզի պահպանվեն ստեղծագործության իմաստային առանձնահատկությունները, և աշակերտների խոսքը հարստանա դրանցով: Ընթերցած նյութի պատմելը կամ վերարտադրելը առարկաների կատարած գործողությունների, ընթերցած ստեղծագործության գործող անձանց արարքների, նրանց գործունեության մասին որոշակի հաջորդականությամբ հաղորդումն է: Նկարի բովանդակության վերարտադրումը հանդես է գալիս որպես խոսքի զարգացման կարևոր բաղադրիչ.

- Նկարը պատմողին պիտի հուշի՝ ո՞ւմ կամ ինչի՞ մասին պիտի պատմի և ներկայացնի, թե ի՞նչ է տեղի ունենում (ունեցել):
- Նկարի բովանդակության վերարտադրության ժամանակ հիմնական, առանցքային բառերն ընտրելու կարողության ձևավորման ժամանակ ուսուցիչը պիտի նկատի ունենա, որ պատմումը պահանջում է ներկա ժամանակի բայեր, որոնք ցույց են տալիս գործողության արդյունք:
- Պատմելու ժամանակ կիրառվում են *մի անգամ, օրերից մի օր, այդ ժամանակ, հանկարծ, անսպասելի, այդ օրերին, հենց որ* և նման այլ բառեր և արտահայտություններ:

Շարադրություն գրելուց հետո գրավոր աշխատանքների սխալները պետք է ստուգել մի քանի օրվա ընթացքում, հակառակ դեպքում աշակերտները կարող են մոռանալ բնագրի բովանդակությունն ու դրան առնչվող հարցերը, շարադրության առանձին դրվագները, մանրամասները, բառապաշարը, այդ դեպքում շարադրության արդյունքների քննարկումը կդառնա անարդյունավետ և ձևական:

Ինչպես նշում է պրոֆ. Ջ. Գյուլամիրյանը, շարադրություններն ստուգելիս պետք է կարևորել.

ա. շարադրության գաղափարի բացահայտումը և բովանդակության համապատասխանությունը վերնագրին,

բ. եթե պլանով է գրվել, կարևորել համապատասխանությունը պլանին, կարևորել մտքերի հետևողականությունն ու տրամաբանությունը,

գ. գլխավոր մտքի առկայությունը, դրա հստակությունը,

դ. ընտրված բառապաշարի համապատասխանությունը շարադրության լեզվին ու ոճին,

ե. ծավալը՝ բառերի, նախադասությունների քանակը, հակիրճությունը և խոսքաշինությունը,

զ. հոմանիշների, հականիշների և դարձվածքների կիրառումը,

է. շարահյուսական կառուցվածքը՝ նախադասությունների ընդարձակությունը, կառուցման տարաբնույթությունը, խորիմաստ մտքերի, կարողությունների առկայությունը,

ը. ուղղագրության և կետադրության գրագիտությունը,

թ. գեղագրությունը [Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 307-308]:

Շարադրություններում աշակերտների թույլ տված սխալների հաշվառման ժամանակ պիտի կարևորել նյութի շարադրանքը՝ հանդուրժողականություն դրսևորելով թույլ տված ուղղագրական և լեզվական այն սխալների հարցում, որոնց ուղղությամբ աշակերտները գիտելիքներ ձեռք չեն բերել: Առանձին դեպքերում գրավոր աշխատանքները կարելի է քննարկել երկու տեսանկյունից՝ վերաբերմունք դրսևորելով ինչպես շարադրանքի բովանդակության, այնպես էլ գրագիտական կողմի նկատմամբ:

Շարադրությունների մեջ թույլ տված սխալների ուղղման գործընթացի մեթոդական շղթան հետևյալն է.

1. աշակերտների՝ տետրում թույլ տված սխալների ուղղում,
2. սխալների դասակարգում, պատճառների որոշում,
3. համադասարանային աշխատանք տիպային սխալների շուրջ,

4. թույլ տրված սխալների շուրջ տարաբնույթ վարժությունների կատարում:

Շարադրություն անցկացնելուց և ստուգելուց հետո աշակերտների կատարած սխալներն առանձնացրել ենք վերոհիշյալ սկզբունքով: Դասակարգել ենք սխալները, այնուհետև աշակերտներին հրավիրել ենք գրատախտակի մոտ, և նրանք նշված սխալների շուրջ կատարել են տարբեր վարժություններ: Ուշադրություն ենք դարձրել ոճական, քերականական և ուղղագրական սխալներին:

Շարադրություն գրելու կարողության մեթոդական քայլաշարը կազմված է երեք փուլից՝ ա/ բանավոր՝ նկարի շուրջ պատմում, բ/ գրավոր՝ շարադրության տարրական կարողության զարգացում, գ/ գրավոր շարադրություն գրելու կարողության ձևավորում:

<u>Առաջին փուլն</u> իրականացվում է բանավոր եղանակով: Նկարի շուրջ պատմվածքներ են հյուսվում և վերարտադրվում է բնագրերի բովանդակությունը:

Խոսքի զարգացման նպատակով շարադրություն գրելու ժամանակ նպատակային է կիրառել համապատասխան թեմաներով նկարներ (այդպիսիք տրվում են նաև մայրենիի դասագրքերում), աշակերտներին հանձնարարվում է պատմել այդ նկարների բովանդակությունը: Ընդ որում՝ ոչ միայն վերարտադրել, այլև պատմել ստեղծագործաբար՝ օգտագործելով ինչպես ծանոթ, այնպես էլ նոր բառեր, որոնք հաճախ տրվում են նկարին կից մեթոդական կառույցում, կամ նշված բառերը ուսուցիչը գրում է գրատախտակին:

Խոսքի զարգացման նպատակով աշակերտին կարելի է հանձնարարել նկարել նշված ստեղծագործության կամ բնագրի բովանդակությունը: Նման առաջադրանքի նպատակն է զարգացնել աշակերտի երևակայությունը, գունային զգացողությունը, գույների միջոցով զգացմունքներ արտահայտելը, ինչը կարևոր է խոսքի զարգացման ընթացքում:

Շարադրության տեքստի նկարի վերարտադրման աշխատանքներում կարևոր և ուրույն տեղ ունի հարցը: Դրանք տրվում են՝

ա. տեքստի ընդհանուր բովանդակության բացահայտման նպատակով՝ ինչի՞ մասին է տեքստը, ի՞նչ վերնագիր կտայիք նկարին,

բ. առարկաների, երևույթների նկարագրման նպատակով՝ ի՞նչ է նկարված, ինչպիսի՞ն է, ի՞նչ է անում, ինչի՞ է նման, ինչպե՞ս է անում, ի՞նչ է տեղի ունենում և այլն,

գ. նկարի տարբեր մասերի միջև կապեի հաստատման նպատակով՝ ինչո՞ւ, ինչի՞ համար, ինչո՞վ են նման, ինչո՞վ են տարբեր,

դ. նկարում պատկերվածի սահմանների դուրս գալու և տեքստի բովանդակությունը ընկալելու նպատակով՝ ի՞նչ եք կարծում՝ հետո ինչ կլինի, ի՞նչ է տեղի ունեցել, ինչպե՞ս իմացաք, ինչպե՞ս կավարտվի պատմությունը,

ե. կապված աշակերտների՝ նկարի բովանդակությանը մոտ անձնական փորձի հետ՝ ի՞նչ կանեիր նման դեպքերում,

զ. բառապաշարի համալրման նպատակով՝ ինչպե՞ս կարելի է այլ կերպ ասել այդ մասին, ինչպե՞ս կարող ես նկարագրել նրանց կամ տեղի ունեցածը:

Շարադրություններ գրելիս նմանօրինակ աշխատանքների ներառումը նպաստում է երեխաներին հաղորդակցական-խոսակցական խնդիրների մակարդակից դեպի վերլուծական-ստեղծագործական-կառուցողական խոսք տանելը: Բնագրի, տեքստերի շուրջ հարցեր կազմելիս պետք է նկատի ունենալ հետևյալը.

- ✓ հարցի բառապաշարը պետք է աշակերտին ծանոթ լինի և չպարունակի անծանոթ բառեր,
- ✓ հարցերը պետք է կազմվեն դիպուկ բառերով, հստակորեն արտահայտեն հարցնողի միտքը,
- ✓ անհրաժեշտ է հարցն այնպես կազմել, որ այն արտահայտի միայն մեկ հարցում և երկարաշունչ չլինի,
- ✓ հարցը պետք է լինի բազմապատասխան և աշակերտներին տա ընդարձակ խոսք կառուցելու հնարավորություն, միայն «այո» կամ «ոչ» ակնկալող հարցերը չեն զարգացնի երեխաների խոսքը,
- ✓ եթե ուսուցիչը ցանկանում է, որ աշակերտներն իրենց պատասխաններում կիրառեն հատկապես այս կամ այն բառը, նա կարող է այդ բառն իր հարցում գործածել՝ նպատակ ունենալով հուշել, հիշեցնել կամ ծանոթացնել աշակերտներին այդ բառերը կամ արտահայտությունները,
- ✓ չի կարելի տալ բնագրի, տեքստի շուրջ շփոթեցնող և կասկածահարույց հարցեր,

- ✓ եթե հարցերը գրվում են գրատախտակին, նպատակահարմար է դրանց կողքին գրել հենակետային՝ բանալի բառերը:

Շարադրության ընտրությունը ևս կարևոր դեր ունի: Նպատակային է ընտրել հեքիաթներ, հետաքրքիր սյուժե ունեցող ստեղծագործություններ, որոնք դաստիարակչական արժեք ունեն և միևնույն ժամանակ հանդես են գալիս որպես կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց[1]:

Օրինակ՝ բոլոր երեխաներն էլ սիրում են հեքիաթներ լսել ու կարդալ: Հեքիաթի բովանդակության հետաքրքրաշարժությունը, դեպքերի զարգացման հաջորդականությունը, հերոսների բնավորության գծերի հստակությունը, պարզությունը, հաճախակի կրկնվող սկիզբն ու բազմաթիվ արտահայտությունները, հաճելի ավարտը, մատչելի գաղափարն ու ենթատեքստը հեշտացնում են հեքիաթի ընթրցումն ու այն դարձնում ցանկալի: Բացի դրանից՝ մեծ է հեքիաթի դաստիարակչական նշանակությունը: Այն ներկայացնում է բարոյական արժեքներ ու սկզբունքներ, որոնք ներկայացվում են ոչ թե որպես խրատ ու քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքներով, խոսքերով: Հենց այդ հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, զգացմունքների ու համոզմունքների վրա թողնվողազդեցությունը:

Շարադրության տեքստի վերարտադրումը սովորաբար ուղեկցվում է հետևյալ քայլերով.

1. ուսուցչի կողմից բնագրի ընթերցում՝ աշակերտների՝ տեքստի բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,
2. բնագրի երևակայական կողմի բացահայտում, եթե առկա է տեքստում,
3. բնագրի բարոյախրատական իմաստի վեր հանում,
4. բնագրում կիրառված բառերի վերլուծություն:

Սա նշանակում է, որ շարադրության բնագրի ընկալումը պետք է իրականացվի բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրատարրերի կիրառմամբ: Դիտարկենք նշված քայլաշարը, թե շարադրության տեքստը հեքիաթ է:

Բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչներով հեքիաթը ուսումնասիրելուց հետո պիտի անցնել նրա բովանդակության երևակայական կողմի

[1] **Ջ. Գյուլամիրյան,** Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 160:

բացահայտմանը: Սակայն, նշենք, որ այդ ամենը չպետք է բացահայտ կերպով անել, այլապես հեքիաթը կդադարի նպաստել երեխաների երևակայության բացահայտմանը: Նախ անհրաժեշտ է, որ երեխաներն իրենք որոշեն, թե իրենց կարդացած կամ լսած հեքիաթում նկարագրված դեպքերից որոնք կարող են կատարվել իրականում, որոնք անիրական են, մտացածին և այլն:

Շարադրության տեքստի ուսումնասիրման մեթոդական շղթան ընդգրկում է հետևյալ քայլերը.

- նախապատրաստական զրույց շարադրության տեքստի թեմայի շուրջ,
- շարադրության ամբողջական ընթերցում ուսուցչի կողմից,
- բառային աշխատանք,
- աշխատանք ստեղծագործության երևակայական կողմի, լեզվի և ոճի առանձնահատկությունների, հիմնական մտքի, դաստիարակչական գաղափարի բացահայտման, ենթատեքստի կռահման ուղղությամբ,
- պատմելու նախապատրաստում, պատմում,
- ամփոփում:

Հեքիաթները, պատմվածքները՝ որպես շարադրության նյութ, օգնում է աշակերտներին խորասուզվել մտքերի ծովը, կենդանի մտապատկերներով վերամարմնավորել բնության անսովոր ու հանդիսավոր երևույթները, առեղծվածային ուժերը և ներմուծել դրանք երկրային իրական կյանք: Նմաօրինակ տեքստերի միջոցով երեխան հստակեցնում է աշխարհի կերպարն իր մտապատկերում ու հոգում, որոշում իր տեղն ու դերը այս աշխարհում: Այդ հարցում նրան օգնում է ուսուցիչը: Օրինակ՝ հեքիաթի միջոցով երեխան հասկանում է, որ թագավորն էլ կարող է բարի, ազնիվ ու իմաստուն լինել, աղքատն էլ, որը լիաչք, բարեսիրտ ու աննախանձ է: Նա անտրտունջ կրում է իր տառապանքները: Անվրեժ է չարիքի դեմ: Հարկավոր է երեխային բացատրել և ցույց տալ այդ երևույթները՝ իրական կյանքի օրինակներով, առանց վերամբարձ խրատաբանության: Այդկերպ են վեր հանում հեքիաթի բարոյախոսությունը, ինչն անմիջականորեն նպաստում է տեքստի վերարտադրմանը:

Շարադրությունների գրման հաջորդ՝ **<u>երկրորդ փուլը</u>** իրականացվում է գրավոր եղանակով: Տեղի է ունենում գրավոր շարադրություն գրելու տարրական կարողության զարգացում:

Գրավոր խոսքն իր մշակվածությամբ, ճշգրտությամբ ու բառապաշարի հարստությամբ, լեզվական օրենքների ու օրինաչափությունների ճիշտ կիրառությամբ, անկասկած, ավելի բարձր ու անթերի է, քան բանավոր խոսքը, սակայն, չնայած դրան, այնուամենայնիվ, այն իր արտահայտչական հնարավորություններով շատ ավելի ցածր է, քան բանավոր խոսքը և բացարձակորեն հենվում է բանավոր խոսքի վրա:

Վերոնշյալ երեք փուլերի հիմնական քայլերն են.

- ✓ պլանի կազմում,
- ✓ նյութի հավաքում, մշակում,
- ✓ մտքերի հաջորդականության որոշում,
- ✓ օգտագործվող բառերի ճշտում,
- ✓ քերականական օրինաչափությունների կրկնում:

Խոսքի զարգացման համար անհրաժեշտ են երեք բաղադրիչների՝ բառապաշարի հարստացման ու կատարելագործման, խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանման ու լավ պատմելու կարողության մշակման աշխատանքները անհրաժեշտ է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված[2]:

Այսպիսով՝ շարադրություն գրելու աշխատանքի մեթոդիկայի ճիշտ ընտրությունը նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը: Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Խոսք կառուցելու կարողության մշակման տեսակետից օգտակար են բառային աշխատանքները, տեքստի ընկալումն ու դրան հաջորդող փուլը՝ պատմումը, որը հնարավոր է իրականացնել նույնիսկ դասագրքում եղած թեմատիկ նկարների շուրջ կապակցված պատմությունների ստեղծման, տեսածի ու լսածի, զգացածի ու խորհածի վերարտադրման միջոցով: Այս բոլոր դեպքերում երեխաներն ստիպված են լինում կապակցված ձևով ու որոշակի համակարգով խոսք կառուցել: Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից պետք է ամբողջությամբ վերարտադրվի,

---

[2] **Ս. Խաչատրյան**, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013, էջ 4-5:

որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի ու դեմքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք ասել:

Դասարան՝ 4-րդ (չորրորդ)
Առարկա՝ Մայրենի **Դասի տեսակը՝** Գրավոր աշխատանք (համառոտ շարադրություն)
Թեմա՝ **«Խիղճը»**

Դասի նպատակներն ու խնդիրները՝

- Դաստիարակել հոգատարություն թույլերի և անօգնականների հանդեպ:
- Երախտագիտության զգացում ունենալու և երախտապարտ լինելու կարողության ձևավորում:
- Զրույց ուրիշին օգտակար լինելու թեմայի շուրջ:
- Ձևավորել կապակցված խոսք կառուցելու և բնագրի բովանդակությունը Համառոտ վերարտադրելու կարողություն:
- Հարստացնել աշակերտների բառապաշարը նոր բառերով ու բառակապակցություններով:
- Գայլի մասին ճանաչողական գիտելիքների ձևավորում:

Զննական պարագաներ՝ նկարներ (մայր գայլի և ձագուկի): Դասը վարել «ԽԻԿ» համակարգով: **Դասի ընթացքը՝** - Կազմակերպական պահ

Խթանման փուլում աշակերտներին ներկայացրինք համառոտ շարադրություն գրելու պահանջները:

Անցկացրինք նախապատրաստական զրույց վայրի կենդանիների՝ մասնավորապես գայլի ապրելակերպի, իր ձագերին խնամելու մայրական հոգատարության, «Կենդանիների աշխարհում» հաղորդաշարից ձեռք բերած տեղեկությունների մասին:

Սովորողները տեղեկություններ հաղորդեցին գայլի և նրա ձագերի մասին, նկարագրեցին, որ գայլը նման է շանը, բայց գիշատիչ է, հիմնականում լինում է մոխրագույն, ագահ է, ունի լավ տեսողություն, լսողություն և հոտառություն:

Իմաստի ընկալման փուլում կարդացինք բնագիրը՝ բովանդակությունն ամբողջությամբ ընկալելու նպատակով:

Կատարեցինք մտքերի փոխանակություն մայր գայլի վիճակի, ձագի անօգնական լինելու, որսորդ Պարգևի հոգատարության և նրա հետագա քայլերի վերաբերյալ:

Աշակերտները գնահատեցին որսորդի վերաբերմունքը անօգնական գայլուկի հանդեպ և իրենց պատրաստակամությունը հայտնեցին կենդանիներին օգնելու առումով:

Երկրորդ անգամ բնագիրը կարդացինք հատվածաբար, դուրս գրեցինք յուրա քանչյուր հատվածի անհասկանալի, ուղղագրական արժեք ունեցող և հենակե տային բառերը, ապա աշակերտները վերնագրեցին յուրաքանչյուր հատվածը: Գրատախտակին գրվեցին հետևյալ բառերն ու բառակապակցությունները՝ որսորդ Պարգև, նվալ, սևուկ, կազդուրվել, դարձավ, առողջ, կատաղի, ոռնալ, թռչկոտել, մեկ-մեկ, հանկարծ:

Համառոտ շարադրության համար ունեցանք հետևյալ վերնագրերը.

1. Որսորդ Պարգևի և գայլուկի հանդիպումը:
2. Գայլուկը հոգատար ձեռքերում:
3. Երախտապարտ գայլուկն ազատության մեջ:

Աշակերտները պատմեցին յուրաքանչյուր վերնագրի բովանդակությունը՝ օգտագործելով առանձնացված բառերը: Ապա երկու աշակերտ համառոտ պատմեցին բնագրի բովանդակությունը՝ խուսափելով ներկայացնել մանրամասները:

Կատարվեց շարադրության գրառում տետրերում:

Կշռադատման փուլում աշակերտները կատարեցին գրավոր աշխատանքների ինքնաստուգում և հանձնեցին տետրերը:

Գրավորների արդյունքները գոհացուցիչ էին. նախ այն առումով, որ աշակերտնե ը հասկացել էին, թե որքան կարևոր է օգնության ձեռք մեկնել թույլ ու անօգնական արարածին, ապա կարևոր է այն, որ օգնություն ստացողն իր երախտագիտությունն է հայտնում ինչ-որ ձևով: Ձեռքբերում էր այն, որ աշակերտները ճիշտ էին հասկացել համառոտ շարադրություն գրելու պահանջները և կարողացել էին գլխավորը տարբե

ռակել երկրորդականից: Որոշ աշխատանքների մեջ նկատվում էին թերություններ՝ ուղղագրական սխալներ, մտքերի ոչ ճիշտ ձևակերպում:

Շարադրության արդյունքները հետևյալն են՝

Գերազանց՝ 65 %

Լավ՝ 20 %

Բավարար՝ 15 %

Անբավարար գնահատական չենք ունեցել:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր ուսումնասիրած մասնագիտական գրականության, վարած դասերի և փորձարարական աշխատանքի արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1.Լրտսեր դպրոցականների՝ շարադրություն հյուսելու կարողության ձևավոր ման նպատակով իրականացվող աշխատանքները նպաստում են սովորողների բանավոր ու գրավոր գրագետ խոսք կառուցելու հմտության զարգացմանը. այդ գործընթացում զարգանում են սովորողների պատկերավոր և քննադատական մտածողության, երևակայության, ինքնուրույն ստեղծագործական և մտավոր գործունեություն ծավալելու կարողությունները,

2.Շարադրության համար նախատեսված ստեղծագործությունների բովանդա կությունը պետք է համապատասխանի կրտսեր դպրոցականների տարիքային և ճանաչողական հետաքրքրություններին, ունենա պարզ կառուցվածք, դեպքերի տրամաբանական, ըմբռնելի հաջորդականություն և դաստիարակչական արժեք,

3. Սովորողների խոսքի զարգացմանը նպաստում են մասնավորապես շարադրության հետևյալ տեսակները՝ մանրամասն, համառոտ, ընտրովի, ստեղծագործաբար, հատկապես, երբ դասի ընթացքում իրականացվում է համագործակցային աշխատանք, և կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ,

4.Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացմանը նպաստում են նաև փոխադրվող նյութի գաղափարի և կատարվող դեպքերի շուրջ ծավալվող վերլուծությունը, անհրաժեշտ բառապաշարի առանձնացումը և օգտագործումը գրավոր կամ բանավոր փոխադրելու ընթացքում:

5. մեր կողմից մշակված և փորձարկված մեթոդական քայլաշարը նպաստում է կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացմանը և կապակցված խոսքի զարգացմանը:

6.այս գործընթացում կարևորվում են նկարների շուրջ պատմությունների հյուսումը և պլանի կազմումը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ս., Հայոց լեզու, Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1958, էջ 418]:
2. Աղայան Ղ., Ուսումն մայրենի լեզվի, Հայ մանկավարժներ, Գիրք Ա,Երևան, 1958:
3. Ասատրյան Զ., Տարրական կրթության մանկավարժություն, Եր., 2017թ. -160 էջ:
4. Ասատրյան Լ. և ուրիշներ, Մանկավարժություն/ ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի համար/, Երևան, Արտագերս, 2017թ.-358 էջ:
5. Գյուլամիրյան Զ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015թ.-316 էջ:
6. ԳյուլամիրյանԶ.,Արտագրությունների, թելադրությունների, շարադրությունների շարադրությունների ձեռնարկ, Երևան, Զանգակ- 97, 2015թ-184 էջ:
7. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987թ,329 էջ:
8. Եզեկյան Լ. Հայոց լեզու 12: Ակագ դպրոցի հումանիտար հոսքի 12-րդ դասարանի դասագիրք /Լ. Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան: Խմբ. Լ. Հովսեփյան. Եր.. ՄԱՆՄԱՐ, 2011 -184 էջ
9. Էդիլյան Գ., Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 1923թ,- 296էջ:
9. Թորոսյան Կ. և ուրիշներ, «Մայրենի 2 -4»: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2007թ,-88 էջ:
10. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ.,Մուսայելյան Ս., Միավորային գնահատման հարցարանների շտեմարան, արտագրություն, թելադրություն, շարադրություն, շարադրություն, Հրազդան, Նարեկ հրատարակչություն, 2013թ. -224 էջ: